տեղ գնալ, դէմքը քօղարկում է, որ «գաւուրները» նրա սրբազան երեսը չտեսնեն: Որքա՜ն վանքեր է քանդել տոել, որքա՜ն հայոց գիւղորայք է այրել. քրիստոնեաներին ոչնչացնելը նրա ամենասիրելի բաղձանքն է:

— Այստեղ ի՞նչ է շինում:

— Պարսից հետ ինչ-որ ընդհարումներ է ունեցել, այդ պատճառով հեռացել է սահմանից, եկել է այստեղ:

— Որպիսի՞ ընդհարումներ:

— Մի քանի ամիս առաջ նա մի արշաւանք կատարեց դէպի Ուրմիոյ լճակի հարաւ-արեւմտեան կողմերը եւ ասպատակեց մի քանի գաւառներ:

— Միթէ՞ այդքան ուժ ունի:

— Մի օրոայ մէջ կարող է տասն կամ քսան հազար ձիաւորներ զէնքի կոչել:

— Նրա իսկական բնակութեան տեղը որտե՞ղ է:

— Զաբ գետի հովիտը, որ այլ անունով կոչւում է Նեհրի, Աղբակից եւ Ջուլամերկից փոքր-ինչ հեռու: Այնտեղ ընդարձակ կալոածքներ եւ շատ գիւղեր ունի. բաւական հարուստ մարդ է:

— Երեւի այդ հարստութիւնը բոլորը յափշտակութեամբ է դիզել:

— Անտարակոյս:

— Եւ դու գնում ես մի այդպիսի չարագործի մօ՞տ:

— Ես նրա մօտ չեմ գնում, ես մի ուրիշին պէտք է տեսնեմ:

— Դու շէյխի հետ ծանօ՞թ ես:

— Ծանօթ եմ, բայց եթէ այժմ եւրոպական հագուստով տեսնելու լինի ինձ, երեւի չի ճանաչի:

Գիշերից բաւական անցել էր, երբ հասանք շէյխի վրաններին: Խարոյկները մարել էին, եւ ամբողջ բանակի վրայ տիրում էր մթին խաւար: Վրաններրի շրջակայքում հաւաքուած ձիաների երամակները, ոչխարների հանգրոանները, կովերի ու եզների նախիրները ցոյց էին տալիս, որ այդ բանակը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ խաշնարածների մի ընդարձակ իջեւան, որը, հարկաւորած ժամանակ, կարող էր եւ պատերազմական բանակի փոխոել: Բոլոր դիրքերի վրայ հսկում էին զինուած գիշերապահները: Մուտք գործելու հնար չկար: Շները խօլ վագրների նման թռչում էին մեր ձիաների գլխի վրայ: Նրանց ձայնից մօտեցան մեզ մի քանի գիշերապահներ, հարցնելով.

— Ովքե՞ր էք, ի՞նչ էք կամենում: